Հավելված
Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
քաղաքացիական ավիացիայի
գլխավոր վարչության պետի
2016 թվականի ապրիլի 26-ի
թիվ 71-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱԵՐՈԴՐՈՄՆԵՐՈՒՄ ՎԹԱՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային և ներքին օդանավակայանների աերոդրոմներում վթարափրկարարական և հրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է Չիկագոյի Կոնվենցիայի N14 Հավելվածի, ԻԿԱՕ-ի N9137 ձեռնարկի (Doc.9137) 1-ին և 7-րդ մասերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետի 2007 թվականի ապրիլի 23-ի N64-Ն հրամանով հաստատված «ՀՀ սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմաններով» (այսուհետ՝ Շահագործման պայմաններ) սահմանված պահանջների համաձայն և սահմանում է աերոդրոմ շահագործողի կողմից միջազգային և ներքին օդանավակայանների աերոդրոմներում վթարային իրավիճակներում միջոցառումների պլանավորման աշխատանքների կազմակերպման գործընթացը:
1) Սույն ուղեցույցի իմաստով Աերոդրոմ շահագործող է համարվում օդանավակայանի սեփականատերը կամ այն իրավաբանական անձը, որն իրականացնում է օդանավակայանի շահագործումը կամ կոնցեսիոն կառավարումը:
2. Վթարային իրավիճակներում միջոցառումների պլանավորման նպատակը ավիացիոն պատահարների և միջադեպերի ժամանակ հետևանքների նվազագույնի բերելն է՝ նախ և առաջ մարդկանց կյանքը փրկելը, այնուհետև օդանավակայանի անխափան գործունեության ապահովումը:
3. Օդանավակայանի աերոդրոմում վթարափրկարարական և հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման աշխատանքների կազմակերպումն իրականացնում է Աերոդրոմ շահագործողը:
4. Աերոդրոմ շահագործողի կողմից մշակվում և հաստատվում է օդանավակայանի վթարային Ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), համաձայն Շահագործման պայմանների 63-րդ կետի՝ ելնելով աերոդրոմում շահագործվող օդանավերի տիպերից և թռիչքների ինտենսիվությունից:
5. Ծրագիրը հանդիսանում է օդանավակայանի տարածքում վթարափրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը կանոնակարգող փաստաթուղթ: Ծրագրում պետք է հաշվի առնվի մարդկային գործոնը:

6. Ծրագրով սահմանվում է աերոդրոմում կամ դրա շրջակայքում առաջացած արտակարգ իրավիճակների դեպքում վթարափրկարարական միջոցառումների իրականացման գործընթացը, դրանում ընդգրկված մարմինները և այդ մարմինների միջև համագործակցության կոորդինացումը:

7. Վթարափրկարարական աշխատանքներում կարող են ընդգրկվել հետևյալ մարմինները կամ ծառայությունները՝

1) աերոդրոմային համապատասխան ծառայություններ (աերոդրոմային, ավիացիոն անվտանգության, թռիչքների էլեկտրալուսատեխնիկական ապահովման, հատուկ տրանսպորտային միջոցների),

2) օդային երթևեկության կառավարման ծառայություն,

3) ոստիկանություն,

4) բժշկական ծառայություն,

5) օդանավ շահագործողներ,

6) ավիացիայի բնագավառի պետական լիազոր մարմիններ և այլն:

8. Ծրագրում ներկայացվում են՝

1) վթարային իրավիճակները, որոնց համար մշակված է Ծրագիրը,

2) վթարափրկարարական աշխատանքների կազմակերպումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1043-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում որոնման և փրկարարական ծառայությունների կազմակերպման ու համագործակցության կարգի» դրույթների,

3) վթարային օպերատիվ կենտրոնը և շարժական ղեկավարման կետը,

4) այն աշխատակիցների տվյալները (ազգանուն, հեռախոսահամար), որոնց հետ վթարային իրավիճակների առաջացման դեպքում հաստատվում է կապ,

5) կոորդինացիոն ցանցով գծանշված աերոդրոմի և դրա շրջակայքի քարտեզը:

9. Վթարափրկարարական գործընթացն ապահովում են Աերոդրոմի վթարային օպերատիվ կենտրոնը և շարժական ղեկավարման կետը՝

1) վթարային օպերատիվ կենտրոնն ապահովում է վթարափրկարարական աշխատանքների կոորդինացումն ու ղեկավարումը,

2) շարժական ղեկավարման կետն ապահովում է վթարի տեղում փրկարարական աշխատանքների կոորդինացումը և հետևանքների վերացումը,

3) Ուղեցույցի 7-րդ կետում նշված մարմինների կազմից ընտրվում են Աերոդրոմի վթարային օպերատիվ կենտրոնի և շարժական ղեկավարման կետի ղեկավարներ:

10. Ծրագրում նախատեսվում են պարբերական ուսումնավարժական միջոցառումներ, որոնց շրջանակներում՝

1) երկու տարին մեկ անգամ իրականացվում են լայնածավալ միջոցառումներ աերոդրոմում ենթադրվող վթարային իրավիճակների պայմաններում,

2) լայնածավալ միջոցառումների միջև ընկած ժամանակահատվածում իրականացվում են նպատակային միջոցառումներ, որոնք ուղղված են վերացնելու լայնածավալ ուսումնավարժական միջոցառումների ժամանակ ի հայտ եկած թերությունները:

11. Օդանավակայանի վթարափրկարարական և հրդեհային անվտանգության պահպանությունն ապահովելու նպատակով Աերոդրոմ շահագործողի կողմից կազմավորվում է փրկարարական և հակահրդեհային ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն):

12. Աերոդրոմ շահագործողը Ծառայությանն ապահովում է անհրաժեշտ քանակի հաշվարկներով (անձնակազմով), հրդեհաշիջման միջոցներով, նյութերով, սարքավորումներով, տրանսպորտային միջոցներով և կապով:

13. Ուղեցույցի 12-րդ կետով սահմանված անհրաժեշտ քանակները պայմանավորված են աերոդրոմի հրշեջ պահպանության պահանջվող մակարդակով սահմանված կատեգորիայով. համաձայն Շահագործման պայմանների 9-րդ գլխի:
14. Աերոդրոմը պետք է ապահովված լինի հրշեջ-փրկարարական կայանով, որը տեղակայվում է այնպես, որ վազքուղու վերջավորություններում, ինչպես նաև աերոդրոմի ամենաահեռավոր կետեր առաջին հրշեջ մեքենայի (ների) բացազատման ժամանակը չգերազանցի 3 րոպեն, իսկ հաջորդ մեքենայի (ների)՝ առաջին մեքենայի (ների) բացազատման ժամանակից ոչ ավել քան 60 վայրկյան՝ օպտիմալ տեսանելիության և մակերևույթի պայմաններում՝
1) Եթե սույն կետով սահմանված պահանջը հնարավոր չէ ապահովել մեկ վթարափրկարարական կայանով՝ աերոդրոմում պետք է նախատեսվեն լրացուցիչ վթարափրկարարական կայաններ:
2) Հնարավորության սահմաններում հրշեջ-փրկարարական կայանի տեղակայման վայրն ընտրվում է այնպես, որպեսզի վազքուղու վերջավորություններում առաջին հրշեջ մեքենայի բացազատման ժամանակը նվազեցվի մինչև 2 րոպե:
15. Ծառայությունն ապահովում է անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը, տեսական և գործնական պարապմունքների միջոցով մշակված ծրագրի համաձայն:
16. Տեսական պարապմունքներն իրականացվում են Աերոդրոմ շահագործողի կողմից հաստատված ուսումնական ծրագրերով: Ուսումնական ծրագրերում պետք է ընդգրկվեն հետևյալ հիմնական թեմաները՝
1) օդանավակայանի վթարափրկարարական և հրդեհային անվտանգության միջոցառումների ծրագիրը,
2) աերոդրոմի հատակագիծը, աերոդրոմի տարրերը, երթևեկման ուղղիները,
3) աերոդրոմում շահագործվող օդանավերի տիպերը և դրանց առանձնահատկությունները,
4) հրդեհաշիջման նյութերի, միջոցները և սարքավորումների տեսակները և դրանց օգտագործման պայմանները,
5) հնարավոր հրդեհային իրավիճակները, դրանց գնահատումը և հետևանքները:
17. Անձնակազմի գործնական պարապմունքներն իրականացվում են ուսումնավարժական միջոցառումների անցկացման ձևով, որոնք պետք է ուղղված լինեն անձնակազմի գործնական ունակությունների կատարելագործմանը.
1) ուսումնավարժական միջոցառումների ժամանակացույցը և ծրագիրը սահմանվում են Աերոդրոմ շահագործողի կողմից,
2) ուսումնավարժական միջոցառումներում կարող են ներառվել Ուղեցույցի 7-րդ կետում նշված մարմինները:
18. Ծառայության անձնակազմը պետք է ապահովված լինի պաշտպանական արտահագուստով և անհատական պաշտպանիչ միջոցներով.
1) ծառայության կողմից իրականացվում է վերահսկողություն սույն կետում նշված արտահագուստի և միջոցների պիտանիության ժամկետների նկատմամբ,
2) ժամկետանց կամ վնասված պաշտպանական արտահագուստի և անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործումն արգելվում է:
19. Ծառայությունն ապահովում է հրշեջ-փրկարարական տրանսպորտային միջոցների շահագործողական պատրաստականությունը՝
1) հրշեջ-փրկարարական տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումն իրականցվում է արտադրողի կողմից սահմանված շահագործողատեխնիկական փաստաթղթերով սահմանված ժամանակացույցի և ծրագրի համաձայն: